

ԹՈՒՐԻԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2002-2011 ԹԹ.

ԱՆԴՐԱՆԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Թուրքիան առաջին իսլամադավան պետությունն է, որ 1949 թ. ճանաչեց Իսրայել պետության անկախությունը¹: Մեկ տասնամյակ անց՝ 1958 թ., գաղտնի թռիչքով Թուրքիա ժամանած Իսրայելի վարչապետ Բեն Գուրիոնը և ԱԳ նախարար Գուլդա Մեյերը Թուրքիայի նախագահ Ադնան Մենդերեսի հետ հանդիպման ժամանակ կնքեցին պայմանագիր, որով սկիզբ դրվեց Բեն Գուրիոնի մտահղացմանը՝ հայտնի Պերիֆերիալ պակտին կամ Պերիֆերիալ ալյանսին, որի նպատակը Մերձավոր Արևելքում (ՄԱ) ոչ արաբական երկրներ Իրանի, Թուրքիայի հետ արաբական աշխարհին հակազդելն էր²:

Այսպիսով կարելի է փաստել, որ ընդհանուր սպառնալիքը երկկողմ հարաբերությունների մերձեցման հարցում առանցքային դեր կատարեց: 1967 թ., 1973 թ., 1980 թ. արաբա-իսրայելական հակամարտությունների ժամանակ Թուրքիան պաշտոնապես հանդես եկավ Իսրայելին դատապարտող ու իր հավատակիցներին աջակցող հայտարարություններով, իջեցրեց Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունների մակարդակը, սակայն մյուս կողմից շարունակեց Իսրայելի հետ ռազամատեխնիկական գործակցությունը և հետախուզական տվյալների փոխանակումը, մասնավորապես ԱՍԱԼԱ-ի վերաբերյալ³:

Կարելի է այսպիսով նշել, որ դիվանագիտական հարաբերությունների մակարդակի իջեցումը իրականում չազդեց համագործակցության վրա:

1990-ական թթ. նոր փուլ սկսվեց իսրայելա-թուրքական հարաբերություններում: Ծոցի պատերազմը արաբական երկրների միջև, Օսլոյի արձանագրություններն ու հաշտեցման գործընթացն Իսրայելի ու պաղեստինցիների միջև ստեղծեցին նպաստավոր պայմաններ երկու երկրների վերամերձեցման համար, սակայն գլխավոր պատճառն ընդհանուր սպառնալիքների ի հայտ գալն էր երկու պետությունների համար՝ Իրան, Իրաք, Սիրիա և քրդական գործոն: Նման պայմաններում 1993 թ. Թուրքիայի ԱԳ նախարար Յիքմեթ Չեֆինի այցի ժամանակ երկու երկրները կնքեցին ռազմավարական համագործակցության համաձայնագիր, որը նախատեսում էր միջազգային և տարածաշրջանային խնդիրներում, ռազմական տեխնիկայի փոխանակման, կրթության և գիտության, առևտրի ու ներդրումների բնագավառներում համագործակցություն⁴: Թուրքիան մասնավորապես երկկողմ գործակցության համատեքստում Իսրայելից գնում էր

¹ Տե՛ս **Jacob Abadi**, Israel and Turkey: From Covert to Overt Relations, «Journal of Conflict Studies», Volume 15, issue 2, 1995, էջ 3:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս նույն տեղը:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 3.

«Popeye-I» և «Popeye-II» հրթիռներ, «Heron» անօդաչու ինքնաթիռներ, Իսրայելի օգնությամբ արդիականացնում էր «F-4 Phantom» և «F-5» ինքնաթիռները, «M-60A1» տանկերը⁵: Իսրայելն իր հերթին սեփական օդաչուներին մարզում էր Թուրքիայի օդային տարածքում: Այս փաստերը վկայում են, որ երկկողմ հարաբերությունները ռազմավարական գործակցության տեսք ստացան նոր սպառնալիքների ի հայտ գալու պայմաններում: Ռազմավարական ամենակարևոր բաղադրանիշը դարձավ ռազմական արդյունաբերության ասպարեզում համագործակցությունը: 1996 թ. երկու պետությունները նաև ստորագրեցին ազատ առևտրի պայմանագիր, որից հետո երկկողմ առևտրաշրջանառությունը վերելք ապրեց: Սա վկայում է, որ Իսրայելի և Թուրքիայի հարաբերություններում ի հայտ եկավ ևս մեկ կարևոր գործոն՝ տնտեսական փոխգործակցությունն ու փոխկապվածությունը:

2002 թ. Թուրքիայում «Արդարություն և Ջարգացում» կուսակցության (ԱԶԿ) հաղթանակը որոշ վերապահումով ընդունվեց Իսրայելում և Արևմուտքում, քանի որ սերում էր հայտնի իսլամական գործիչ Նեջմեթթին Էրբաքանի «Բարեկեցություն» կուսակցությունից: Իշխանության առաջին տարիներին ԱԶԿ-ն Իսրայելի հետ հարաբերություններում շրջադարձ չիրականացրեց: ԱԶԿ-ի իշխանության գալուց քիչ անց Թուրքիան Իսրայելի հետ իրականացրեց «Ռիլայնտ Մերմեյդ» (Reliant Mermaid) ծովային զորավարժությունները⁶: Երկու կողմերի միջև ակտիվորեն շարունակվեց ռազմական համագործակցությունը. մասնավորապես 2005 թ. Թուրքիան գնեց իսրայելական անօդաչու ինքնաթիռներ, իսկ Էրդողանն իր այցի ընթացքում հաստատեց համատեղ 17 նոր ռազմական ծրագրեր իրականացնելու մտադրությունը⁷: Այս փաստերը վկայում են, որ ԱԶԿ իշխանությունները հիմնականում շարունակեցին ռազմական բնագավառում համագործակցությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան դեռևս բավականին կախված էր Իսրայելի ռազմական օժանդակությունից: Երկկողմ հարաբերությունների տնտեսական բաղադրիչը ևս բավական ակտիվ զարգացում ապրեց անգամ հետագայում՝ դիվանագիտական ճգնաժամի պայմաններում⁸:

Քաղաքական ասպարեզում հարաբերությունները նշանավորվեցին բարձրագույն մակարդակի այցերով. մասնավորապես 2003 թ. Իսրայելի նախագահ Մոշե Կացավն այցելեց Թուրքիա, իսկ 2005 թ. Իսրայել այցելեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը⁹: Այն, որ Էրդողանը 2004 թ. Իսրայելի քաղաքականությունը Գազայում «պետական ահաբեկչություն» որակելուց հետո այց կատարեց Իսրայել և կնքեց, հատկապես ռազմական ոլորտում համատեղ ծրագրեր ներառող նոր պայմանագրեր,

⁵ Տե՛ս **Eugene Kogan**, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry, «Conflict Studies Research Center». September 2005, էջ 3-4:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս «Timeline of Turkish-Israeli Relations», էջ 6:

⁸ Իսրայելի և Թուրքիայի միջև առևտրաշրջանառությունը աճեց՝ 600 միլիոն դոլարից (2010) հասնելով մինչ 695 միլիոն դոլարի (2011-ի առաջին վեց ամսում), <http://www.israeltrade.org.tr/content/view/354/1>.

⁹ Տե՛ս «Timeline of Turkish-Israeli Relations», էջ 7:

վկայում է քաղաքական համագործակցության գծի շարունակականության մասին: 2007 թ. Թուրքիան հանդես եկավ Գազայի հատվածում էրեզ արդյունաբերական գոտի կառուցելու առաջարկով, որը ողջունեցին հակամարտող կողմեր Իսրայելը և Պաղեստինի Ինքնավարությունը¹⁰: Էրեզի նախագիծը վկայում է միջնորդության մեջ «փափուկ ուժի» կիրառման մասին: 2008 թ. Թուրքիան նախաձեռնեց Իսրայելի և Սիրիայի միջև անուղղակի բանակցություններ, որոնք ընդհանուր առմամբ անցան չորս փուլով¹¹: Կողմերը, ըստ հայտարարությունների, բավական մոտ էին համաձայնագրի կնքմանը, սակայն այն ընդհատվեց Գազայի հատվածում Իսրայելի սկսած ռազմական գործողությունների պատճառով: Վերոնշյալ փաստերից երևում է, որ ԱԶԿ-ի կառավարման սկզբնական շրջանում Թուրքիայի քաղաքականությունն Իսրայելի նկատմամբ ավելի շատ նախորդ գծի շարունակությունն էր, քան նորություն: Ռազմական և տնտեսական ակտիվ փոխգործակցության շարունակումը, նաև նոր պայմանագրերը դրա ապացույցն էին: Ավելին, Թուրքիան Անկարայում հյուրընկալեց հակամարտող կողմերին և առաջարկեց համատեղ բիզնես նախագծեր:

2008 թ. ջրբաժան դարձավ Իսրայելի հանդեպ Թուրքիայի դիրքորոշման առումով: 2008 թ. դեկտեմբերին, երբ դեռ շարունակվում էին Իսրայելի անուղղակի բանակցությունները Սիրիայի հետ, Գազայի գոտում Իսրայելը սկսեց լայնածավալ ռազմական գործողություններ, որոնք բավականին մեծ թվով խաղաղ բնակիչների մահվան պատճառ դարձան: Թուրքիան Իսրայելին մեղադրեց բանակցությունները տապալելու, ագրեսիա իրականացնելու մեջ: 2009 թ. հունվարին Էրդողանն իր վրդովմունքն Իսրայելի հանդեպ արտահայտեց հրապարակավ՝ Դավոսի համաշխարհային տնտեսական ֆորումում՝ մեղադրելով Իսրայելի նախագահ Պերեսին մարդասպանության մեջ¹²: Երկու կողմերի միջև առաջին լուրջ ճգնաժամից կարելի է մի քանի եզրակացություն անել. այն փաստը, որ Իսրայելի ռազմական գործողությունների պատճառով միջնորդական երկու առաքելություն տապալվեց, վկայեց Թուրքիայի միջնորդության անկատարությունը և խորապես ազդեց նրա միջնորդական հեղինակության վրա: Մյուս կողմից՝ Դավոսի միջադեպը ցույց տվեց, որ Թուրքիան սկսել է Իսրայելի հետ հարաբերություններն օգտագործել ներքաղաքական նպատակներով, և Թուրքիայի հասարակական կարծիքը ավելի ազդեցիկ գործոն է դարձել երկկողմ հարաբերություններում:

Երկկողմ հարաբերությունների վատթարացման հերթական առիթը 2009 թ. սեպտեմբերին Իսրայելի արգելքն էր Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուին՝ այցելելու Գազա և հանդիպելու Յամասի առաջնորդներին. դրան ի պատասխան՝ Թուրքիան 2009 թ. հոկտեմբերին կասեցրեց Իսրայելի մասնակցությունը «Անատոլիական արծիվ» զորավարժությանը¹³:

¹⁰ Տե՛ս **Bulent Aras**, Turkey and the Palestinian Question, «SETA, Brief No: 27», January 2009:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ Տե՛ս «Turkey's Crises over Israel and Iran», Crisis group Europe Report № 208, 8 September 2010, էջ 2:

2010 թ. թուրքական հեռուստաալիքով Իսրայելի զինվորների վերաբերյալ թշնամանք հարուցող ֆիլմ ցուցադրելու կապակցությամբ պատճառաբանումներ ստանալու նպատակով Իսրայելի փոխարտգործնախարար Դենի Այալոնն իր մոտ հրավիրեց Թուրքիայի դեսպանին և նվաստացրեց, հրապարակավ նստեցնելով ցածր աթոռի վրա¹⁴: Ի պատասխան դրա՝ Թուրքիան սպառնաց ետ կանչել իր դեսպանին, և Իսրայելը ներողություն խնդրեց, սակայն այս միջադեպը ևս լուրջ դեր խաղաց անվստահության պահպանման և խորացման հարցում:

Իսրայելի և Թուրքիայի հարաբերություններում, սակայն, ամենախորու լուրջ ճգնաժամը սկսվեց «Մավի Մարմարայի» միջադեպի հետևանքով: 2010 թ. մայիսին վեց նավից բաղկացած միջազգային նավատորմը շարժվեց Գազա՝ շրջափակումը վերացնելու և այնտեղ գտնող պաղեստինցիներին մարդասիրական օգնություն հասցնելու նպատակով: Նավատորմի կազմում էր նաև թուրքական մարդասիրական օգնության հիմնադրամին պատկանող «Մավի Մարմարա» նավը: Մայիսի 31-ին նավատորմը գրավվեց Իսրայելի զինուժի կողմից, որի ընթացքում զոհվեց Թուրքիայի ութ քաղաքացի և թուրքական ծագման մեկ ԱՄՆ քաղաքացի¹⁵: Միջադեպը բուռն արձագանք գտավ միջազգային ասպարեզում: ԱՄՆ-ը և ԵՄ-ը կոչ արեցին միջազգային անկախ հետաքննություն անցկացնել: Թուրքիայի արձագանքը բավականին խիստ էր. նա նախապայման դրեց, որ Իսրայելը ներողություն խնդրի, հատուցի վնասը, վերադարձնի նավը և համաձայնի միջազգային անկախ հետաքննության: Իսրայելն իր հերթին հրաժարվեց մեղքն ընդունել՝ մեղադրելով մարդասիրական օգնության հիմնադրամին իր սահմանային ջրերը հատելու համար: Ի վերջո կողմերը համաձայնեցին ՄԱԿ-ի հովանու ներքո անկախ հետաքննություն անցկացնել, որի նպատակով ստեղծված հանձնաժողովին առաջադրեցին մեկական ներկայացուցիչ: Ջեկույցում, որ հրապարակեց հանձնաժողովը, նշվում էր, որ կողմերից ոչ մեկը կանխամտածված չի զնացել այդ առճակատմանը, ուստի կոչ էր արվում բարելավել հարաբերությունները՝ միաժամանակ նշելով Իսրայելի կողմից պատշաճ ափսոսանք հայտնելու և փոխհատուցելու անհրաժեշտությունը¹⁶: 2011 թ. սեպտեմբերի 2-ին՝ զեկույցի հրապարակման հաջորդ օրը, Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուն հրապարակեց Թուրքիայի պատասխանը. Թուրքիան իջեցնում է դիվանագիտական հարաբերություններն Իսրայելի հետ երկրորդ քարտուղարի աստիճանի, ռազմական համագործակցության պայմանագրերը դադարեցվում են, Թուրքիան կանի անհրաժեշտ քայլեր Արևելյան Միջերկրականում ազատ նավագնացություն պահովելու համար, Թուրքիան նաև կդիմի Արդարադատության միջազգային դատարան՝ Գազայի շրջափակման օրինականությունը քննելու համար¹⁷: Դավութօղլուն հատուկ շեշտեց, որ խոսքը Իսրայելի տվյալ իշխանությունների հանդեպ կիրառվող պատժամիջոցների

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 6:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 8:

¹⁶ Տե՛ս «Palmer Report», <http://graphics8.nytimes.com/packages/pdf/world/PalmerCommittee-Final-report.pdf>

¹⁷ Տե՛ս **Atilla Sandikli**, Relations Have Hit Rock Bottom, 13 September 2011, <http://www.bilgesam.org>

մասին է¹⁸: 2008 թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան դադարեցնում է բոլոր առևտրական, ռազմական պայմանագրերն Իսրայելի հետ, սակայն օրեր անց վարչապետի խոսնակը հստակեցնում է, որ խոսքը միայն ռազմական առևտրին է վերաբերում¹⁹: Չեկոյցի հրապարկումից հետո Թուրքիայի դիրքորոշման ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ չնայած երկկողմ հարաբերությունների մակարդակի իջեցմանը, Թուրքիան չխզեց հարաբերություններն ի սպառ, իսկ տնտեսական կապերը մնացին անխախտ: Թուրքիան նաև հրաժարվեց Իսրայելին ռազմական ներկայությամբ սպառնալու նախնական մտադրությունից, որը ևս մեկ անգամ վկայում է ռազմական առճակատումից խուսափելու Անկարայի դիրքորոշման մասին:

2008 թ. դեկտեմբերին, երբ Իսրայելը Գազայի հատվածում սկսեց ռազմական օպերացիա, ընդամենը չորս օր էր անցել Սիրիայի հետ Թուրքիայում տեղի ունեցած անուղղակի բանակցություններից և Էրդողանի հետ հանդիպումից: Իսրայելի այս անսպասելի քայլը Թուրքիայի միջնորդական հեղինակությանը հարվածելուց բացի, անձնական վիրավորանք էր Թայիվ Էրդողանի համար, ով խաբված զգաց Իսրայելի վարչապետ Յահուդ Օլմերտից:

ԱԶԿ-ի իշխանության տարիներին Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանում զգալի մեծացավ: Նա խորացրեց երկկողմ հարաբերությունները տարածաշրջանի գրեթե բոլոր երկրների հետ տնտեսական և քաղաքական դաշտում: Անցած տարիների ընթացքում Թուրքիան ազատ առևտրի պայմանագրեր կնքեց Իրաքի, Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի հետ: Այդ երկրների հետ հաստատվեցին նաև միջկառավարական «Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդներ»²⁰:

Իրանի հետ, որը երկար ժամանակ ընդհանուր սպառնալիք էր Իսրայելի և Թուրքիայի համար, հարաբերությունները քաղաքական և հատկապես տնտեսական առումով բավական բարելավվեցին: Իրանի հետ առևտաշրջանառությունը մի քանի տարում բազմապատկվեց²¹: Քաղաքական ասպարեզում Թուրքիան Իրանի նկատմամբ հիմնականում դրական չեզոքություն էր պահպանում՝ Արևմուտքի աճող ճնշումների ֆոնին:

2011 թ. «Արաբական գարունը» լուրջ մարտահրավեր էր Թուրքիայի տարածաշրջանային դիրքերի համար: Թուրքիան բռնապետական սասանվող ռեժիմների հետ արդեն ուներ բազմամիլիարդանոց տնտեսական պայմանագրեր, և ակնհայտ էր, որ նրանց տապալումը կհանգեցներ այդ գումարների փոշիացման: Սակայն Թուրքիան միաժամանակ «Արաբական գարունը» օգտագործեց սեփական դիրքերն ամրապնդելու նպատակով: Ի վերջո սատարելով միապետների դեմ ապստամբներին՝ Թուրքիան ամուր հիմքեր ստեղծեց նոր արաբական իշխանությունների հետ համագործակ-

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

¹⁹ Տե՛ս «Turkey clarifies: Trade sanctions against Israel include only defense industry», «The Haaretz» 06 September 2011:

²⁰ Տե՛ս «Turkey and the Middle East: Ambitions and Constraints». Europe Report № 203, 7 April, 2010, էջ 16:

²¹ Տե՛ս նույն տեղը:

ցելու համար: Սեպտեմբերին Էրդողանի կատարած այցերը Եգիպտոս, Լիբիա և Թուրքիա հենց այս նպատակն էր հետապնդում:

Տարածաշրջանում նոր առաջնորդ դառնալու մղումը, բնականաբար, հակասում է Իսրայելի հետ նախկին ռազմավարական համագործակցությանը: Թուրքիան տարածաշրջանի առաջնորդ կարող է դառնալ միայն Իսրայելի հետ նախկին ռազմավարական համագործակցության հաշվին, որի դրդապատճառները և նպաստող հանգամանքները գրեթե լիովին փոխվել են: Ահա նման պայմաններում Թուրքիան գնաց հարաբերությունների վատթարացման Իսրայելի հետ, որը, հիմնականում տարածաշրջանում ուժերի փոփոխության օբյեկտիվ հետևանք էր: Սակայն Իսրայելի ու Թուրքիայի միջև հարաբերությունների խզման ու ռազմական առճակատման հավանականությունը բավականին ցածր է՝ հաշվի առնելով մի քանի գործոն: Թուրքիան բարձր է գնահատում երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները և չի դիմի դրանք խզելու քայլի: Մյուս կարևոր հանգամանքը ԱՄՆ հրեական լոբբինգ Թուրքիայի կախվածությունն է հատկապես Չայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Բացի այդ, տարածաշրջանում առաջնորդ դառնալու և կարևոր դերակատար լինելու հարցում ծայրահեղական մոտեցումը՝ ընդհուպ մինչ ռազմական առճակատում, կնվազեցնի կամ կփոշիացնի առաջնորդ դառնալու ջանքերը, քանի որ անհնար է դառնալ գլխավոր դերակատար առանց իրողությունների հետ հաշվի նստելու: Ձինված առճակատումն Իսրայելի հետ հարված կհասցնի Արևմուտքի հետ հարաբերություններին՝ մթազնելով ԵՄ անդամակցելու հեռանկարները: Իսրայելի հետ վերջնական խզման և առճակատման հավանականությունը նաև նվազ է այն պատճառով, որ տարածաշրջանում Թուրքիայի առաջնորդ դառնալու ձգտումները միանշանակ չեն ընկալվում, և հարևանների հետ հարաբերություններում ամեն ինչ անամպ չէ: Մասնավորապես, 2011 թ. սեպտեմբերին ՆԱՏՕ-ի ռադարի տեղադրումը Թուրքիայի տարածքում, որն ուղղված է Իրանից եկող սպառնալիքի դեմ և հիմնականում կոչված է Իսրայելը պաշտպանելուն, բավական անհանգստությամբ ընդունվեց հարևան Իրանում: Չնայած երկու երկրների միջև բարելավված հարաբերություններին, կողմերը դեռևս զգուշավոր են միմյանց նկատմամբ: Երկկողմ հարաբերությունների լարվածության մյուս պատճառը Սիրիան է. ներկայումս Սիրիան և նրան աջակցող Իրանը կրկին անհանգստության պատճառ են Թուրքիայի համար: Սա անհրաժեշտ է հաշվի առնել Իսրայելի հետ հարաբերություններում, քանի որ նախկինում այս երկու երկրից եկող ընդհանուր սպառնալիքը կարևոր դեր է խաղացել Իսրայելի և Թուրքիայի մերձեցման գործում: Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է փաստել, որ Թուրքիան շահագրգռված չէ հարաբերությունների իսպառ խզման կամ ռազմական առճակատման գնալու հարցում:

Երկկողմ հարաբերությունների նախկին ռազմավարական մակարդակի վերականգնումը ևս հնարավոր չէ՝ տարածաշրջանում ու Թուրքիայում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով: Նախ՝ Թուրքիան, ինչպես նշվեց, այլևս Իսրայելի հետ չի կիսում ընդհանուր սպառնալիքների մեծ մասը, և, հետևաբար, ռազմավարական դաշինքը չի կարող մնալ ինքնան-

պատակ: Մերձավոր Արևելքում առաջնորդի դեր կատարելը ուղղակի հակասում է Իսրայելի հետ ռազմավարական դաշինքին, քանի որ տարածաշրջանի պետությունների մեծ մասը Իսրայելն ընկալում է իբրև սպառնալիք, իսկ մի մասն անգամ չի ճանաչում նրա գոյությունը: Կարևոր հանգամանք է նաև Իսրայելից ռազմատեխնիկական կախվածության նվազումը: 2004-2008 թթ. Թուրքիան զինված ուժերում սեփական արտադրանքի կշիռը 15 %-ից հասցրեց 42%-ի²²: Իսրայելից իր ռազմական կախվածությունը թուլացնելու քայլ Թուրքիան կատարեց, երբ 2010 թ. արտադրեց սեփական առաջին անօդաչու ինքնաթիռը, որ նախկինում գնում էր Իսրայելից: Թուրքիան նաև դիմում է ռազմական ապրանքների ներկրման աղբյուրների դիվերսիֆիկացման քայլերի²³:

Այսպիսով, Իսրայել-Թուրքիա հարաբերությունները ձևավորվել և զարգացել են ընդհանուր սպառնալիքների գոյության պայմաններում: Արաբական ծայրահեղականությունը, Իրանի, Իրաքի, Սիրիայի խնդիրները, քրդական հարցը երկկողմ հարաբերությունները մերձեցնող կարևոր գործոններ են: Միջպետական հարաբերություններում մյուս կարևոր գործոնը առևտրատնտեսական կապերն են, այդ թվում՝ ջրի խնդիրը: Ռազմական ասպարեզում համագործակցությունը ևս կարևոր էր երկկողմ հարաբերություններում: Ներքին քաղաքականության և այլ գործոնների ազդեցությամբ արված հակաիսրայելական հռետորաբանությունը, անգամ դիվանագիտական հարաբերությունների մակարդակի իջեցումը, չեն խանգարել երկկողմ գործակցության շարունակմանը տնտեսական և ռազմական ասպարեզներում:

ԱԶԿ-ի իշխանությունները նախնական շրջանում հիմնականում շարունակել են նախորդ իշխանությունների գիծը: Մասնավորապես տնտեսական և ռազմական համագործակցությունը մեծ վերելք է ապրել: ԱԶԿ-ի իշխանությունների կառավարման երկրորդ շրջանից (2007 թ.) երկկողմ հարաբերությունները թևակոխել են ճգնաժամային փուլ, որի պատճառներից կարելի է առանձնացնել Թուրքիայի միջնորդության տապալումը, ընդհանուր սպառնալիքի վերացումը կամ առնվազն խիստ նվազումը, տարածաշրջանային առանջնորդ դառնալու Թուրքիայի նկրտումները:

Թեպետ Թուրքիան Իսրայելի հետ իր դիվանագիտական հարաբերությունների մակարդակը իջեցրել է նվազագույնի, խզել է ռազմական գործարքները և սպառնում է առճակատմամբ, սակայն դա քիչ հավանական է՝ հաշվի առնելով հատկապես Թուրքիայի կախվածությունը հրեական լոբբիից, տնտեսական հարաբերությունների շահավետությունը, նաև Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի դիրքորոշումն այդ հարցում: Մեկ այլ կարևոր խանգարիչ գործոն է տարածաշրջանի անկայուն իրավիճակը. Իրանի և Սիրիայի հետ հարաբերություններում վերջերս առաջացած լարվածությունն ու անորոշությունը ևս կպայմանավորեն Իսրայելի հետ Թուրքիայի հարաբերությունների հետագա ընթացքը:

²² Տե՛ս **Caglar Kurc, Ozer Cetinkaya**. Israeli-Turkish Defense Cooperation: Building Bridges with Bullets, «EurasiaCritic», June 2009:

²³ Տե՛ս նույն տեղը:

Հարաբերություններում, սակայն, նախկին մակարդակի վերականգնումը նույնպես քիչ հավանական է: Թուրքիայի տարածաշրջանային նոր հավակնությունները, Իսրայելից ունեցած ռազմական կախվածության նվազումը, ընդհանուր սպառնալիքների մեղմացումը քիչ հավանական են դարձնում նախկին ռազմավարական գործակցությունը: Հարաբերությունների ապագայի առավել տրամաբանական տարբերակը, թվում է, երկկողմ նորմալացումն է, որը, սակայն, տեղի կունենա ոչ թե ռազմավարական համագործակցության վերականգնման, այլ առավել ցածր՝ ոչ ռազմավարական գործակցության մակարդակով:

АНДРАНИК ИСРАЕЛЯН – Турецко-израильские отношения (2002–2011). – Существует мнение, что после прихода к власти партии «Справедливость и развитие» новый курс Турции в отношении Израиля обусловлен исламской идеологией. Однако в первое время правящая партия сохранила с южным соседом нормальные отношения (Анкара заключила новые договоры с Тель-Авивом, была посредником в переговорах между Израилем и Сирией, а также делала попытки примирить Израиль и палестинцев). И только после инцидента с «флотилией свободы» в 2010 году Анкара отозвала из Тель-Авива своего посла и потребовала от Израиля официальных извинений и материальной компенсации. В статье раскрываются факторы, повлиявшие на изменение турецкого курса: стремление Анкары к лидерству в регионе; внутривосточная обстановка в стране; развивающаяся военная промышленность. Делается вывод, что, несмотря на острые разногласия, членство Турции в НАТО и экономические связи двух стран не позволят им полностью разорвать отношения.

ANDRANIK ISRAYELYAN – Turkish-Israeli Relations (2002-2011). – Since Turkish-Israeli relations deteriorated under Justice and Development Party of Turkey, the widespread opinion was that the JDP conducts Islamic oriented foreign policy and policy reversal towards Israel is determined by ideological factors. Whereas JDP has Islamic background, initially it concluded new treaties with Israel, and undertook mediation between Syria and Israel. Turkey also made efforts to broker peace between Israel and Palestine. Turkey, however, changed its attitude towards Israel. After Mavi Marmara incident in 2010 Turkey downgraded its diplomatic relations with Israel and sought compensation for the damage. The article highlights the reasons for this political reversal. Turkey's regional aspirations, domestically driven foreign policy, growing defense industry are among the reasons behind this policy shift. On the other hand, economic ties and Turkey's status within NATO will prevent relations from collapse.